ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1955 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում սեպտեմբերի 27-ին և 28-ին տեղի ունեցավ Ավետիք Իսահակյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտական սեսիան։

Սեսիան բաց անելով, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը ասաց.

Հարգելի ընկերներ.

Հայ ժողովուրդը այս օրերին խորին հարգանքով, սիրով ու երախտագիտությամբ է մեծարում իր հարազատ որդուն՝ մեր դասական գրականության ականավոր ներկայացուցիչ, մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանին՝ նրա ծննդյան 80-ամյակի առթիվ։ Մենք կարող ենք գոհունակությամբ նշել, որ մեր ժողովրդի այս մեծ ուրախությանը ի սրտե մասնակից են նաև Սովետական Միության եղբայրական բոլոր ժողովուրդները։

Ինքնուրույն թվականներին գրական ասպարեզ իջնելով՝ իր սրտահույզ «երգեր ու վերքեր»-ով, Իսահակյանը ջերմ ընդունելություն գտավ ժողովրդի կողմից և դարձավ մեր ամենասիրված բանաստեղծներից մեկը։

Մոտ 60 տարի շարունակ Իսահակյանի քնարը ստեղծագործում է, նորանոր գրական գոհարներով հարստացնելով մայրենի գրականությունը։ Իսահակյանի երգերը դարձել են ժողովրդի ամենալայն խավերի սեփականությունը։ Մեծ բանաստեղծի հմայքը նրա ստեղծագործության խորը ժողովրդայնության մեջ է։ Իսահակյանի սքանչելի երկերը, լիրիկական բանաստեղծությունները ու լեգենդները, բալլադները ու առակները, դրույցները ու պատմվածքները հարազատ ու սիրելի են ժողովրդին, որովհետև արտահայտում են նրա նվիրական հույզերն ու տենչերը։

Ցարիզմի և կապիտալիզմի տիրապետության դաժան ժամանակաշրջանում մեծ բանաստեղծը արտահայտել է ժողովրդի տրտունջն ու բողոքը ազգային և սոցիալական ճնշումների դեմ և ժողովրդի հավատը երջանիկ ապագայի նկատմամբ։ Իսահակյանի լավագույն ստեղծագործությունները տոգորված են հայրենասիրության և ազատասիրության, ժողովուրդների եղբայրության և հումանիզմի վսեմ գաղափարներով, ազատ ու երջանիկ կյանքի բուռն կարոտով ու տենչով։ Նա ձգտել է ու երազել ներդաշնակ մի հանրակարգ, ուր ժողովուրդն ազատ լինի ամեն տեսակի ճնշումներից։

Տասնյակ տարիներով փայփայած իր վսեմ իդեալների իրականացումը Իսահակյանը տեսավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակով նվաճված սովետական կարգերում։ Երկար անջատումից հետո վերադառնալով հայրենիք, մեծ բանաստեղծը իր բոլոր ուժերը նվիրեց իր հարազատ և վերածնված ժողովրդի գրականության ու կուլտուրայի զարգացմանը։ Նա դարձավ մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցը։

Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ Իսահակյանն իր ոգեշունչ բանաստեղծություններով և մարտական հոդվածներով, սովետական առաջավոր գրողների հետ միասին, ժողովրդին և ռազմաճակատի մարտիկներին խանդավառում էր հայրենասիրությամբ և հաղթանակի հավատով։ Հետպատերազմյան տարիներին Իսահակյանը նույն եռանդով նվիրվեց խաղաղության պաշտպանության գործին, լինելով Սովետական Միության խաղաղության պաշտպանության կոմիտեի անդամ։

1943 թվականին, երբ Սովետական կառավարության որոշմամբ հիմնադրվեց Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիան, Ավետիք Իսահակյանը միաձայն ընտրվեց մեր Ակադեմիայի իսկական անդամ։ Մեր Ակա-

դեմիայի գոյության ամբողջ ընթացքում Իսահակյանը իր իմաստուն խորհուրդներով ու ցուցումներով, իր հեղինակավոր ձայնով մասնակցել ու աջակցել է Ակադեմիայի աշխատանքներին, նրա առջև կանգնած կարևորագույն հարցերի լուծմանը։

Իսահակյանը մեր ժողովրդի հպարտությունն է, մի անուն, որ այսօր համաշխարհային ճանաչում է ստացել։ Մեծ բանաստեղծի լավագույն ստեղծագործությունները թարգմանված են Սովետական Միության, ժողովրդական դեմոկրատիայի երկրների և աշխարհի այլ լեզուներով։ Իսահակյանի միջոցով աշխարհի ժողովուրդները ծանոթանում են մեր բազմադարյան և հարուստ գրականությանը։

Մեր գրականության ալեղարդ նահապետը, մեր սիրելի վարպետը երջանիկ է այսօր, որ շրջապատված է իր երախտագետ ժողովրդի սիրով ու հարգանքով։ Երջանիկ ենք և մենք, որ նրան տեսնում ենք մեր մեջ, լսում ենք նրա իմաստուն խոսքը և աշխատում ենք նրանով ոգեշնչված։

Թող երկար ու երկար ապրի մեր սիրելի վարպետը ի փառս մեր ժողովրդի, մեր մայրենի գրականության։

Ընկ. Համբարձումյանի բացման խոսքից հետո սեսիայում կարդացվեցին հետևյալ զեկուցումները. «Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ժողովրդայնությունը» (զեկուցող Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Դ. Դեմիրճյան)։ «Ավետիք Իսահակյանը և հայ կլասիկ գրականության տրադիցիաները» (զեկուցող ֆիլոլոգ. գիտությունների թեկնածու Ա. Ինճիկյան)։ «Ավետիք Իսահակյանի լեզվի և ոճի առանձնահատկությունները» (զեկուցող ֆիլոլոգ. գիտությունների թեկնածու Վ. Առաքելյան)։ «Ավետիք Իսահակյանը և ժողովրդական բանահյուսությունը» (զեկուցող ֆիլոլոգ. գիտությունների թեկնածու Ա. Լանալանյան)։

Զեկուցումներից մի քանիսը տպագրվում են «Տեղեկագրում»։